

Նախնական տարբերակ

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

ԴԷՊԻ ԿԱՏԱՐԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Նուիրում եմ բոլոր ժամանակների բոլոր ազգերազատասեր
մարդկանց...

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժողովրդավարությունը մեծագույն համամարդկային արժեքներից է: Պետությունների ժողովրդավարականության կողմնակիցներն արձանագրում են, որ իր բոլոր թերություններով հանդերձ ժողովրդավարությունը հասարակական հարաբերությունների կարգաւորման եւ ազգային պետական կեանքի կառավարման լուսագույն համակարգային հնարաւորությունն է: Ընդգծւում է նաեւ այն, որ ժողովրդավարությունը դարձել է միջազգային հարաբերությունների կարգաւորման, պետությունների խաղաղ գոյակցութեան եւ զարգացման գլխաւոր նախապայմանը:

Պատմական տարբեր ժամանակաշրջաններում գործած ժողովրդավարութեան զանազան դրսևերումների մասին եւ կիսուեմ միայն ըստ անհրաժեշտութեան: Աւելորդ եմ համարում անդրադառնալ հանրայայտ եւ բազմիցս մատուցուած ճշմարտություններին, քանի որ ժողովրդավարութեան մասին հազարաւոր գրքեր ու յօդուածներ են գրուել:

21-րդ դարում գործող ժողովրդավարական համակարգերը, նրանց իւրահատկությունները տարբեր հեղինակների կողմից մատուցուած են հանգամանօրէն: Այդ համակարգերը էականօրէն տարբերում են իրարից՝ պետությունների կառուցուածքով, ընտրական համակարգերով, իշխանութեան ճիւղերի ձեւաւորման եղանակով, սակայն ընդհանրական են անպայմանօրէն ժողովրդի կամքով ձեւաւորուող ժողովրդի ներկայացուցչական մարմիններով՝ խորհրդարաններով:

Ժողովրդավարութեան վերաբերեալ պատկերացումները տարբեր են: Տարբեր են նաեւ ժողովրդավարական համակարգերը: Այդ տարբերությունները ժողովրդավարություններին չեն խանգարում ունենալ ընդհանրական՝ համանման բաղադրիչներ, սակայն ակնյայտօրէն խոչընդոտում են ժողովրդավարութեան համընդհանուր եւ համապարտադիր համակարգի կայացմանը:

Ժողովրդավարությունը՝ «դեմո-կրատիա»-ն, որպէս հասկացութիւն ներկայանում է հնագույն ժամանակներից եւ նոյնքան հին է որքան մարդկային քաղաքակրթությունը, սակայն տարբեր ժամանակներում այն տարբեր բովանդակութիւն է ունեցել: Այդ տարբերությունը նախ եւ առաջ դրսևերուել է տարբեր դարերում գործած ժողովրդավարական համակարգերում՝ «դեմոս»-ի բովանդակութեամբ՝ պարունակութեամբ: Մեր օրերում «դեմոս»-ը, թուով է, ստացել է իր վերջնական սահմանումը: Այն ներառում է բոլոր մարդկանց՝ անկախ նրանց սեռային, կրօնական, ռասսայական եւ այլ առանձնահատկություններից: Թերեւս վերջին խոչընդոտը մարդկանց քաղաքացիությունն է, առանց որի նոյն տարածքում ապրող մարդիկ կարող են ունենալ կամ չունենալ տուեալ տարածքի կառավարմանը մասնակցելու՝ քուէարկելու իրաւունք:

Կարծում եմ ժողովրդավարութեան հարցում ընդհանուր յայտարարի գալու ձգտումը կարող է շահել, եթէ մենք նախ փորձենք ճշտել ժողովրդավարութեան տեղը գիտական համակարգում: Իմ կարծիքով դա առաջնային հարցերից մէկն է: Կայ տեսակետ, որ ժողովրդավարությունը պատկանում է քաղաքագիտութեան ոլորտին: Համեմատաբար պակաս են ժողովրդավարությունը իրաւագիտական ոլորտի բաղկացուցիչ համարողները: Այս հարցի վերաբերեալ մեր մտտեցումը ներկայացնելուց առաջ փորձենք հստակեցնել ժողովրդավարութիւն հասկացութեան առանցքային բովանդակությունը:

Ժողովրդավարությունը բարդ բառ է՝ բաղկացած ժողովուրդ եւ վարել-իշխել-կառավարել արմատներից: Ժողովուրդ նշանակում է մարդկային հաւաքականութիւն: Պետութեան պարագայում այդ պետութեան հիմնական բնակիչները կոչւում են նաեւ քաղաքացիներ: Վարելու- կառավարելու-իւնքնակառավարելու տարիքային սահմանափակումը որպէս կանոն արտայայտուում է քաղաքացու չափահասութեան պահանջով: Տարբեր մասնագէտներ այլեւայլ շեշտադրումներով մատնանշում են ժողովրդավարութեան բաղադրիչների

փունջը, սակայն բոլորն էլ ընդունում են, որ առաջնայինը ժողովրդավարության ենթակայ հաւաքականութեան՝ տուեալ պետութեան քաղաքացիների պետական կառավարման համակարգում ընդգրկվածությունն է: Այլ խօսքով ժողովրդավարութեան առկայութեան անհրաժեշտ է բաւարար նախապայմանն այն է, որ ժողովրդի մաս կազմող, ժողովուրդ երեւոյթը կայացնող քաղաքացիներն իրաւունք ունենան անմիջականօրէն կամ միջնորդաւորուած մասնակցելու ժողովրդի ընդհանրական կեանքի կառավարմանը: Ընդ որում խիստ կարեւոր է քաղաքացիների մասնակցութեան իրաւահաւասարութեան ապահովումը:

Պետութիւնը ժողովրդավարական է, եթէ նրա քաղաքացիները առանց որեւէ խտրականութեան իրաւահաւասար կերպով ուղղակիօրէն կամ միջնորդաւորուած մասնակցում են պետութեան կառավարմանը:

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Վերջին հարիւրամեակներում ժողովրդավարութեան հիմնական բաղադրիչների վերաբերեալ մարդկութիւնն հանգել է ընդհանրական եզրակացութիւնների: Դրանք են, մասնաւորապէս՝ խօսքի ազատութիւնը, ընտրելու եւ ընտրուելու, միաւորումներ ստեղծելու եւ դրանց գործունէութեանը մասնակցելու, հանրահաւաքներ անցկացնելու, ազատ տեղաշարժի, տեղեկութիւն ստանալու եւ այլ իրաւունքներ: Դրանով հանդերձ դեռեւս չի յաջողուել ընդհանրական պատկերացում ձեւաւորել ժողովրդավարական պետական համակարգի վերաբերեալ, չնայած նոյնիսկ փորձ է արուել Ժողովրդավարութեան համընդհանուր հռչակագիր ընդունել: Ընդունուած է հաւասարապէս ժողովրդավարական համարել եւ նախագահական, եւ խորհրդարանական, եւ կիսանախագահական հանրապետութիւններն ու սահմանադրական միապետութիւնները: Ի տարբերութիւն գիտութեան այլ ոլորտների, երբ որոշակի չափորոշիչների հիման վրա հստակ տեսակետ է արտայայտուում այս կամ այն համակարգի առաւելութեան մասին, ժողովրդավարութեան մասնագէտները, որպէս կանոն, խուսափում են նախապատուութիւն տալ ժողովրդավարական համակարգերից որեւէ մէկին:

Պետական համակարգերի աւել կամ պակաս ժողովրդավարական լինելու վերաբերեալ հստակ գնահատականներ տալուն խոչընդոտող հանգամանքներից է հարգալից կամ զգուշաւոր վերաբերմունքը ազգերի ժողովրդավարութեան հարցում ընդգծուած պահպանողականութիւն՝ ասանդապաշտութիւն դրսեւորելու նկատմամբ □ Անկեղծ լինելու դէպքում մենք կարձանագրենք, որ սրընթաց արագութիւնների մեր ժամանակներում միայն ժողովրդավարութիւնն է, որ առաջընթաց չի արձանագրում: Եւ մարդիկ, որ ընդամենը տաս տարուա հնութեան որեւէ տեխնիկական միջոց հակուած են հնացած համարել, ժամանակակից ու օգտագործելի են համարում հարիւրամեայ նոյնիսկ մի քանի հարիւրամեայ հնութեան ժողովրդավարական համակարգերը:

Ակնկալել, որ կարելի է գտնել համընդհանուր (ունիվերսալ) ժողովրդավարական համակարգ, որն ընդունելի կլինի բոլոր ազգերի համար, տեղին չէ: Քանի դեռ ժողովրդավարութիւնը քաղաքացիական հասկացութիւն է համարուում եւ նրա կիրառումը շարունակուում է մնալ քաղաքական գործիչների առանձնաշնորհը, մտակայ տասնամեակներում էական փոփոխութիւնն ակնկալելի անյոյս գործ է: Բանն այն է, որ քաղաքական գործիչների հիմնական մտահոգութիւններն են իշխանութեան տիրելը եւ այդ իշխանութեան օգտագործումը: Երկու դէպքում էլ նրանց հետաքրքրում է նախ եւ առաջ իրենց գործունէութեան արդիւնաւետութիւնն ու հարմարաւետութիւնը: Միայն այն ժամանակ կարելի է ակնկալել ժողովրդավարական պատկերացումների եւ բուն ժողովրդավարութեան զարգացում, երբ ժողովրդավարութիւնը կընկալուի որպէս իրաւագիտական՝ քաղաքացիների իրաւահաւասարութիւնը ճշգրտօրէն ապահովող հասկացութիւն:

Այսօր աշխարհում բավական տարածուած է տարբեր ժողովուրդների՝ սեփական ժողովրդավարութիւնն ունենալու իրավունքի ընդունումը, աւելին՝ խրախուսումը: Նման դիրքորոշում կարելի է գտնել նաեւ միջազգային փաստաթղթերում, մասնաւորապէս՝ ժողովրդավարութեան համընդհանուր հռչակագրում, ուր ասված է, որ ամեն ժողովուրդ իրավունք ունի ինքը որոշելու իր ժողովրդավարութեան տեսակը: Ավելին՝ հայտնի են եւ որպէս ժողովրդավարական համակարգերի օրինակելի եւ հաւասարազոր տարբերակներ են ներկայացուում տարբեր տեսակի ժողովրդավարութիւններ՝ նախագահական հանրապետութիւն, սահմանադրական միապետութիւն, խորհրդարանական հանրապետութիւն, եվրոպական տեսակ, լատինաամերիկեան տեսակ եւ այլն:

Պետութիւնների ժողովրդական համակարգերի այդ տեսակներն իրար հետ համեմատելիս շատ իրողութիւններ, հանգամանքներ են վկայակոչվում, սակայն առանցքային՝ քաղաքացիների իրավահավասար կերպով ընտրութիւններին եւ այդ կերպ պետութեան կառուարմանը մասնակցելու դրոյթները առաջնային չեն համարում: Այդ պատճառով այսօր իրապէս ժողովրդավարութեան ձգտող մասնագէտները, եթէ անգամ նրանք հասել են առավել ժողովրդավարական կամ կատարեալ ժողովրդավարական համակարգ բացահայտած լինելու մակարդակի, ստիպուած են զսպել իրենց՝ ենթարկուել տիրող մտայնութեանը:

Տարիներ առաջ եւ շրջանառութեան մեջ մտցրի պետական համակարգերի ժողովրդավարականութեան մակարդակը թուաբանօրէն արտայատելու կոչուած մի բանաձեւ: Այն տարբեր ժողովուրդների ուղղակիօրէն չէր պարտադրում մեկ միասնական պետական համակարգ որդեգրել, սակայն հնարավորութիւ կը տալիս միասնական, բոլոր պետութիւնների համար ընդհանրական չափորոշիչների միջոցով ճշտել, թէ յուրաքանչյուր պետութիւն իր պետական համակարգով քանի տոկոսով է ժողովրդավարական: Նոյն բանաձեւը հնարաւորութիւն է տալիս ճշտել, թէ ինչ մասնաւոր պատճառներով է մի երկրի պետական համակարգը իր ժողովրդավարականութեան մակարդակով աւելի բարձր կամ ցածր մէկ այլ երկրի պետական համակարգի ժողովրդավարականութեան մակարդակից: Յաջորդող տրամաբանական հարցն այն է, թէ մասնաւորապէս որոնք են այդպիսի տարբերութեան պատճառները: Բանաձեւի օգնութեամբ հեշտութեամբ երեւում է, թէ ինչ ցուցանիշով, որ գործակցով է պայմանաւորուած տարբերութիւնը: Դրանից յետոյ արդէն տվեալ ժողովրդի իրաւասու հաստատութիւնների՝ սահմանադրական դատարանների ու խորհրդարանների, իրաւագէտների ու քաղաքագէտների հայեցողութեանը կմնա բարձրացնել, թէ՛ ոչ, իրենց պետական համակարգի ժողովրդավարականութեան մակարդակը: Խօսքը, օրինակ, կարող է վերաբերել ընտրութիւնների հաճախականութեանը, խորհրդարանի ներկայացուցչականութեանը, գործադիր իշխանութեան ձեւաւորման եղանակին:

Կարծում եմ, դա ժողովրդավարութեան վերաբերյալ տարակարծութիւնները նուազագոյնի հասցնելու եւ ընդհանուր յայտարարի գալու ամենարդյունավետ ճանապարհն է: Այլեւս անհրաժեշտ չի լինի բազում ապացոյցներ եւ հիմնաւորումներ ներկայացնել այս կամ այն համակարգի առաւելութեան, նպատակահարմարութեան կամ ինչ-ինչ պատճառներով նախընտրելիութեան վերաբերեալ: Եթէ ժողովրդավարութիւնն է նպատակը եւ ժողովրդավարականութիւնը գլխաւոր որականիշը, ահա միասնական չափորոշիչ:

Միայն այս ճանապարհով է կարելի ազգերին, որոնց կարծիքով իրենք հարյուրամյակների ժողովրդավարական ասանդոթներ ունեն, նրբանկատօրէն ցոյց տալ իրենց պետական համակարգի շեղումները իրական ժողովրդավարութիւնից:

Եթէ վորձ արուի Մեծ Բրիտանիայի քաղաքական գործիչներին պարզապէս ակնարկել, որ նրանց պետական համակարգը հեռու է ժողովրդավարութիւնից, նրանք դա կարող են շատ ծանր ընկալել: Հարյուրամյակներ ապրել են այդ համակարգի պայմաններում եւ դա նրանց էութիւնն է դարձել: Մինչդէռ ժողովրդավարականութեան բանաձեւը բացատրական աշխատանքներ չի տանում: Այն ուղղակի օգնում է տեսնել իրական եւ համեմատական վիճակը եւ աւելի կատարեալին անցնելու որոշում կայացնել: Իրականում խօսքն այնքան կատարեալին անցնելու մասին չէ, որքան անկատարից հրաժարուելու:

Յետագայ շարադրանքում մենք կանդրադառնանք այն իրողութեանը, որ շատ ժողովրդավարական պետութիւններում խորհրդարանական համակարգերը ուղղակի հակասում են սահմանադրութեամբ երաշխաւորուած քաղաքացիների իրաւահաստատութեան սկզբունքին. խորհրդարանները ոչ թէ ընտրութեանը մասնակցած բոլոր քաղաքացիներին ներկայացնող մարմիններ են, այլ՝ հաղթանակած քաղաքացիներինը: Իսկ դա նշանակում է՝ խախտում է սահմանադրականութեան հիմքերի հիմքը՝ քաղաքացիների իրաւահաստատութիւնը:

Մեր առաջարկած բանաձեւն օգնում է տեսնել բոլոր թերացումները մարդու իրաւունքների տեսանկիւնից եւ, օրինակ, մեծամասնական ընտրական համակարգին վարժուած հասարակութիւններում անցում կատարել մեծամասնական սակայն բազմամանդատ ընտրական համակարգի: Դա արդէն ինքնին էականօրէն կնպաստէր, որ ընտրութիւնների արդիւնքում խորհրդարան անցնեին եւ առաջին տեղը գրաւած եւ միւս տեղերը գրաւած թեկնածուների օգտին քուէարկած քաղաքացիների ձայները: Այդ դեպքում պետութեան կառավարման գործընթացին մասնակցելու տրամադրուած քաղաքացիների հիմնական մասի ձայները կանցնեին խորհրդարան: Ընտրութեանը մասնակցած քաղաքացիներն իրենց տարածքներում բաւարար քուէներ հաւաքած չլինելու պատճառով դուրս չէին մնա իրենց կեանքի համար կարելու գործընթացի մաս կազմելու իրենց իրավունքից: Ավանդապաշտ բրիտանական քաղաքական գործիչը այս իրավիճակում կարող է տրամադրվել փոխելու բրիտանական պետութեան խորհրդարանական համակարգը եւ անցնել մի համակարգի, որը մի կողմից պահպանում է ավանդական մեծամասնական (առավելային) ընտրակարգը, միւս կողմից բրիտանական խորհրդարանը դառնում է իսկապէս ներկայացուցչական ընտրութեանը մասնակցած եւ ոչ՝ ընտրութիւններում համեմատաբար աւելի քուէներ ստացած քաղաքացիների ներկայացուցչական մարմին:

Մինչ նշածս բանաձեւին անդրադառնալը, կարծում եմ, ճիշտ կլինի անդրադառնալ ժողովրդավարութեան կարևորագոյն բաղադրիչի՝ խորհրդարանական համակարգերի ձևավորման առանձնայատկութիւններին:

Պետություններն այն դեպքում են համարվում ժողովրդավարական, երբ այդ պետության ժողովուրդը ունի պետության կառավարմանը այս կամ այն ձևով մասնակցելու ներայացուցչական կառույց: Որպես կանոն, ներկայացուցչական մարմինների` խորհրդարանների հիմնական գործառնությունն օրենսդիր գործունեությունն է: Այդ պատճառով նայնիսկ այն դեպքերում, երբ խորհրդարանների իրաւասութեան մէջ մտնում է նաեւ գործադիր իշխանութեան ձեւաւորումը, նրանք համարվում են օրենսդիր մարմին:

Պետական իշխանության երեք հիմնական ճյուղերից օրենսդիրը ընկալում է որպէս պետությունների ժողովրդավարության հիմնական բաղադրիչ: Ոչ մի հաստատութիւն այնքան չի նայնացում ժողովրդավարութեան գաղափարի հետ որքան խորհրդարանը` պատլամենտը: Հենց այդ պատճառով էլ, հաւանաբար, որպէս ժողովրդավարութեան հումանիշ օգտագործում է պատլամենտարիզմ եզրոյթը:

Աշխարհում որպէս ժողովրդավարական հանդէս եկող ներկայացուցչական մարմինները իրենց ձեւաւորման եղանակով իրարից էականօրէն տարբերվում են: Տարիներ առաջ, երբ ես դեռ շրջանառության մէջ չէի մտցրել քաղաքացիների ներկայացուցչականութեան գործակից հասկացութիւնը, եւ սահմանված չէր խորհրդարանի ներկայացուցչականութեան տոկոսի գաղափարը, մենք, ուղղակի պարզ համեմատություններ կատարելով, առաջարկում էինք ժողովրդավարական պետությունների համար նախընտրելի համարել համամասնական ընտրակարգը ի հակադրութիւն մեծամասնական ընտրակարգի: Վկայակոչում էինք այն հանգամանքը, որ մեծամասնականի դեպքում չազդարարուած արգելանքի մակարդակը կարող էր հիսուն տոկոսից աւելի լինել: Համեմատութեան համար ընդգծում էր, որ համամասնականի դեպքում այն որպէս կանոն 7 տոկոսից աւելի չի լինում: Սակայն նայնիսկ այդ ցածր 5 կամ 7 տոկոսանոց արգելանքի պայմաններում անգամ նույն համամասնական ընտրական համակարգը տեսականօրէն կարող է ներկայացուցչականութեան առումով խիստ անընդունելի իրավիճակներ ստեղծել: Օրինակ, եթէ 7 տոկոսանոց արգելանք ունեցող խորհրդարանական ընտրություններին մասնակցում է 14 կուսակցություն և նրանցից 13-ը ստանում են մինչև 6.9 տոկոս ձայներ, 1-ը` մնացալ 11 տոկոսը, ապա չնայած բազմակուսակցական համամասնական համակարգի առկայութեանը խորհրդարանը բաղկացած կլինի մեկ կուսակցութեան ներկայացուցիչներից: Այսինքն, շատերի համար նախապատուելի համարուող համամասնականը տեսականօրէն նայնպէս կարող է բազմակարծութիւնը բացառող իրավիճակի առջեւ կանգնեցնել:

Երբ քաղաքական գործիչներն իրենց երկրի իրավագէտների հետ առաջնորդվում են կառավարելիությունը դյուրինացնելու նպատակադրումով, որպէս կանոն դա անում են խորհրդարաններում տարբեր տեսակի արգելանքների կիրառումով քաղաքացիների ներկայացուցչականությունը նվազեցնելու գնով: Նրանց հետաքրքրում է կառավարման արդիւնաւէտութիւնը եւ բոլորովին չի մտահոգում խորհրդարանի հիմնական հայտանիշի` ներկայացուցչականութեան նուազումը:

Ցանկացած գաղափար, միտք գնահատելիս պետք է շեղում թույլ չտալ տվյալ գաղափարն արտայատող բառի բուն` բովանդակային նշանակութիւնից: Եթէ խորհրդարանը քաղաքացիների ներկայացուցչական մարմինն է, ուրեմն նախապատուելի պետք է համարվի այն խորհրդարանը, որը առավելագույն ներկայացուցչականություն է ապահովում: Այդ մարմնի համար ձեւաւորման այնպիսի համակարգ պետք է որդեգրուի, որը նայնիսկ բացառիկ ծայրահեղական իրավիճակներում բացառի քաղաքացիների ներկայացուցչականութեան ներկայացուցչականութեան խաթարումը: Որեւէ նկատառում կամ նպատակ չպետք է նսեմացնի, պակասեցնի ներկայացուցչական մարմին ներկայացուցչականութիւնը:

Այսօր աշխարհում գործող խորհրդարանական համակարգերը հիմնականում երկուսն են` համամասնական, որը երբեմն կոչվում է նաև բազմակուսակցական ընտրական համակարգ (արգելանքի տոկոսով կամ առանց դրայ) եւ մեծամասնական (իմ նախորդ գործերում ես այն կոչում եմ առաւելային) ընտրակարգը: Վերջինիս նրբերանգներից է բացարձակ մեծամասնական կոչուող ընտրակարգը: Մեծամասնականի դեպքում տուեալ ընտրատարածքից ընտրված է համարվում այն թեկնածուն, որն առավել թվով ձայներ է հավաքել, այսինքն` միւս թեկնածուների համեմատութեամբ աւելի շատ քուէներ է ստացել: Քաղաքագիտութեան մեջ այդ ընտրակարգը կոչում է «հաղթողն ստանում է ամենը» (ՀՄՄ) ընտրակարգ: Բացարձակ մեծամասնական են կոչում այն համակարգը, որի պայմաններում տվյալ ընտրական տարածքից ընտրված է համարվում նա, ով ընտրությանը մասնակցողների ձայների կեսից ավելին է ստանում առաջին կամ երկրորդ փուլում:

Մեծամասնական ընտրական համակարգը իրավագիտական տեսանկյունից արատավոր է: Եթէ որեւէ երկրում որեւէ քաղաքացի դիմի դատարան, ապա հեշտությամբ կարող է ապացուցել, որ դա մի ընտրակարգ է, որի դեպքում խախտվում է քաղաքացիների իրավահավասարությունը: Խախտում է քաղաքացիների համար բախտորոշ` երկրի կառավարմանը նրանց մասնակցելու, ժողովրդավարութեան հարցում:

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատը, որին շատ մեծ դեր է վերապահված ԱՄՆ-ի պետական-քաղաքական կեանքում, ընտրվում է մեծամասնական ընտրական համակարգով: Այն որդեգրված է աւելի քան 200 տարի առաջ և ամրագրված է Ամերիկայի սահմանադրությամբ: Այդ պալատը կոչվում է Ներկայացուցիչների պալատ: Այն չի կոչվում ընտրություններում հաղթած, հաղթող կամ միս քաղաքացիների նկատմամբ առաւելութիւն ստացած քաղաքացիների ներկայացուցչական պալատ, այլ ուղղակի՝ Ներկայացուցիչների պալատ: Միչդեռ այն ԱՄՆ տարբեր ընտրատարածքներում հաղթած քաղաքացիների ներկայացուցիչների պալատն է: Տարբեր ընտրատարածքներում պարտված քաղաքացիները, համարվում է, որ ներկայացվում են այդ հաղթանակած քաղաքացիների քուէների արդիւնքում կոնգրեսական դարձած ներկայացուցիչներով: Որքան էլ որ ճիգ գործադրենք, շատ դժվար է պատկերացնել, որ որպէս դեմոկրատ ընտրված որեւէ կոնգրեսական կարող է իրապէս ներկայացնել հանրապետական հայացքների տեր քաղաքացիների դիրքորոշումը: Ընտրվածին ընտրողների զանգուածից խորթացնող արհեստական մտածողութիւն է այս երեւոյթը, որովհետեւ քաղաքացին չի ընտրել այդ խորհրդարանականին՝ կոնգրեսականին, բայց իրեն համոզում է պարտադրում են նրան ճանաչել որպէս իր ներկայացուցիչ: Նոյն կերպ այդ ներկայացուցիչը գիտէ, որ քաղաքացիների մի զգալի մասը իրեն ձայն չի տուել՝ քուէարկել է մրցակից է կոնգրես չանցած մէկ այլ թէկնածուի օգտին, սակայն ինքը պիտի նաեւ իրեն չընդունողների ներկայացուցիչ զգայ: Արդիւնքում, մի արհեստական հոգեվիճակ է ստեղծվում, որն ի վերջոյ հանգեցնում է խորհրդարանականների նկատմամբ վստահութեան նուազեցմանը: Մի բան որ համարում է ժամանակակից ժողովրդավարութեան առջեւ ծառայած հիմնական մարտահրաւերներից մէկը: Բարձր քաղաքական մշակույթի առկայության պայմաններում կարող է գցուն չարտահայտվել կացութեան անհամարժեքութիւնը, սակայն նոր ձևավորվող ժողովրդավարութիւններում այն կարող է նոյնիսկ ժողովրդավարական արժեքային համակարգի դէմ գործել էւ մարդկանց հիասթափեցնել ժողովրդավարութիւնից □

ժողովրդավարության կայացման երկու ճանապարհ կա: Դրանցից մէկը կարելի է կոչել աւանդական-բարեփոխական, միւսը՝ գիտական-արմատական: Առաջինի բնոյթն արտայտում է տեսականօրէն գործած ավանդույթները՝ այդ թւում պետական համակարգը նոր ժամանակների պահանջներին համապատասխանեցնելով: Այդպէս բազմաթիւ բացարձակ միապետութիւններ ժամանակի ընթացքում դարձան սահմանադրական միապետութիւններ: Նրանցում աստիճանաբար պետական համակարգը համապատասխանեցուեց մարդու իրաւունքներին՝ մարդկանց՝ երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքին, ներդաշնակեցուեց այդ իրաւունքի հետ: Երկրորդը բնութագրում է էւ իր ստեղծման ճանապարհով, էւ սկզբունքներով: Այն հենում է տեսութայնը, գիտական՝ քաղաքագիտական էւ իրավագիտական ձեռքբերումներին, դրա հիման վրա ստեղծում օրենսդրական դաշտ, որն էլ նպաստում է նոր ժողովրդավարական մշակույթի կայացմանը: Ինչպէս ցույց է տալիս ժողովրդավարության առկա վիճակը, այսօր և քաղաքական բարձր մշակույթ ունեցող, և սկսնակ ժողովրդավարական պետությունները պետք ունեն հարցը վերանայնել իրավական ընկալման վրայ հենուելով:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Տարիներ առաջ, երբ էս պատրաստում էի շրջանառության մեջ դնել ժողովրդավարականութեան չափման բանաձևը, համոզում էի հայտնել, որ կատարյալ ներկայացուցչական ժողովրդական մարմին ունենալու բաղձալի իրավիճակին երբեք հնարավոր չէ հասնել: Սակայն ի զարմանս ինձ, ընդամենը երկու-երեք տարի անց գտնուեց լուծումը: Ինչպէս հաճախ է պատահել մարդկութեան պատմության մեջ, պարզվեց, որ այն ինչ անհնարին էր թւում երեկ, կարող ամենապարզն ու ամենահնարաւորը լինել այսօր: Խորհրդարանական ընտրական համակարգերից խոսելիս էս պէտք է ընթերցողիս ուշադրությունը հրավիրեմ մի իրողության վրա, որը ժամանակին ինձ լրջորէն օգնեց հետևողականորէն զարգացնելու քաղաքացիների՝ իրավահավասար կերպով երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքը: Ելակետս այն էր, որ եթէ խորհրդարանը քաղաքացիների ներկայացուցչական մարմինն է, ապա մենք պետք է այդ ներկայացուցչականությունը չափելու հնարավորություն ունենանք: Գնալով այդ ճանապարհով ինձ յաջողուեց գտնել խորհրդարանների ներկայացուցչականութեան չափման կերպը էւ արդիւնքում ներկայացուցչութեան մակարդակն արտայայտել թուերով: Կարծում եմ օրինակով աւելի հեշտ կմտտուցեմ: Եթէ մեծամասնական խորհրդարանական համակարգում խորհրդարանականը ընտրված է 10 000 ընտրողների քվեարկության արդյունքում, ապա նրան ձայն տուած 10 000 քաղաքացիներից իւրաքանչիւրը ունի խորհրդարանական 1 ձայնը՝ քուէն, բաժանած 10 000-ի՝ 1/10 000 խորհրդարանական ձայն: Քաղաքացիների իրավահավասարությունը պահանջում է, որ խորհրդարան անցած բոլոր խորհրդարանականների ստացած քուէների թիվը հավասար լինի մյուս խորհրդարանականների ստացած ձայներին: Միայն այդ դէպքում կարող

են քաղաքացիներն իրաւահաւասար կերպով ներկայացուած լինել, այսինքն հաւասար ներկայացուցչականութիւն ունենալ խորհրդարանում:

Հարցը դիտարկենք այլ շեշտադրումով. Ա եւ Բ ընտրատարածքներում կա 20 000-ական ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացի, սակայն ընտրութիւններին մասնակցել են 18 000-ական քաղաքացիներ եւ Ա տարածքից ընտրուած պատգամաւորն ստացել է 12 000 ձայն, իսկ Բ տարածքից ընտրուած պատգամաւորը՝ 6 000՝ Այսօր աշխարհի խորհրդարաններում պատգամաւորները քուէարկում են մեկական ձայնով: Ա տարածքի պատգամաւոր ունեցող քաղաքացիներից իւրաքանչիւրը խորհրդարանում ներկայացուած է 1/12 000 խորհրդարանական ձայնով: Բ տարածքում քաղաքացիներից իւրաքանչիւրը ունի 1/6000՝ Ստացում է, որ Ա տարածքի քաղաքացիները Բ տարածքի քաղաքացիներից երկու անգամ պակաս ներկայացուցչականութիւն ունեն, որովհետեւ 1/12 000 ականը երկու անգամ փոքր է 1/6 000-ից: Եթէ փորձենք համեմատել այն քաղաքացիների ներկայացուցչականութեան (0/ 6000 կամ 0/12 000) հետ, ում թէկնածուներն ընդհանրապէս չեն անցել խորհրդարան, ապա ակնյատօրէն կնկատենք, որ գործ ունենք անթոյլատրելի իրաւախախտման հետ: Քաղաքացիները պէտք է իրաւահաւասար լինեն, սակայն ներկայացուցչական մարմնում օրէնքով (երբեմն նաեւ սահմանադրութեամբ) ամրագրուած համակարգային անկատարութեան հետեւանքով ակնյատօրէն խախտուած է նրանց այդ իրաւունքը:

Որեւէ երկրի սահմանադրութիւն մարդկանց իրաւահաւասարութիւնը չի ենթակայեցնում, ստորադասում պատգամաւորների իրաւահաւասարութեանը: Ընդհակառակը, գրեթէ բոլոր սահմանադրութիւններում խօսուած է քաղաքացիների իրաւահաւասարութեան մասին, սակայն նոյն, գրեթէ բոլոր սահմանադրութիւններից բխում է, որ խորհրդարանականները անկախ նրանից թէ իրենց օգտին քանի քուէարկող են ունեցել, խորհրդարաններում պիտի քուէարկեն հաւասար մէկ ձայնով, այսինքն՝ նրանք իրավահավասար են: Մեծամասնական ընտրական համակարգերում, երբ տարբեր խորհրդարանականներ տարբեր ձայներով կարող են ընտրվել, որպէս կանոն սահմանվում է, որ բոլոր պատգամաւորների ընտրատարածքները պէտք է իրար հաւասար լինեն կամ իրարից շատ չտարբերուեն: Ընտրուածները այդ տարածքների ներկայացուցիչներն են, հետեւաբար տարածքների տարբերությունը միմիանցից մեծ չպէտք է լինի: Սակայն անտեսում է այն հանգամանքը, թէ բնակչութեամբ իրար հավասար այդ ընտրատարածքներից ընտրված և մեկական խորհրդարանական ձայն ունեցող խորհրդարանականները քանի ձայնով են ընտրվել: ԱՄՆ-ում, օրինակ, կարող է խորհրդարանական՝ կոնգրեսական դառնալ թէկնածու, ով ստացել է 100 000 քուէ եւ թէկնածու, ով ստացել է 400 000 քուէ: Նրանք կունենան մեկական հավասար խորհրդարանական ձայն, իսկ նրանց ձայն տուած քաղաքացիները իրարից չորս անգամ պակաս ներկայացուցչականութիւն:

Առաջնորդուելով քաղաքացիների ներկայացուցչականութեան գործակցով, որ նշանակում է խորհրդարանականի 1 ձայնը բաժանած քաղաքացիների քուէների այն քանակի վրա, որոնցով ընտրուել է այդ խորհրդարանականը, մենք տեսնում ենք, որ մի դեպքում քաղաքացու ներկայացուցչականութեան գործակիցը հավասար է 1 բաժանած 100 000-ի, մյուսը դեպքում՝ 1-ը բաժանած 400 000-ի: Ակնյայտ է, որ խախտուած քաղաքացիների իրավահավասարությունը անբեկանելի սկզբունքը, որն ամրագրված է թէ՛ սահմանադրութեամբ, թէ՛ բազմաթիվ միջազգային փաստաթղթերով: Այդ իրավահավասարությունը պէտք է դրսեւորուի մասնավանդ երկրի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքի հարցում, որովհետեւ դա այն ոլորտն է, որի միջոցով կարգավորվում են քաղաքացիների մյուս իրավունքները:

Այսպիսով՝ հաղթանակած քաղաքացիներին ներկայացուցչական մարմին դարձած Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և այլ մեծամասնական ընտրական համակարգով ձեւաւորուող խորհրդարանները հակասահմանադրական խտրականություն արմատաւորող համակարգեր են:

Մեր օրերում ժողովրդավարության մասնագէտները քաղաքացիների իրավահավասարության մասին խոսելիս բավարարվում են նրանով, որ քաղաքացիները ընտրության օրը լինեն իրավահավասար, ամէն մարդ ունենայ մէկ քուէ: Սակայն որևէ երկրի սահմանադրության մեջ գրված չէ, որ քաղաքացիները միայն ընտրության օրերին պէտք է լինեն իրավահավասար: Քաղաքացիները իրավահավասար պէտք է լինեն մշտապէս, և նրանց միջնորդ կառույցները չպէտք է որևէ կերպ խախտեն քաղաքացիների իրավահավասարությունը: Սա այն սկզբունքային հարցադրումն է, որը կատարյալ ներկայացուցչական մարմիններ գտնելու ելակետ հանդիսացաւ:

ՔՈՒԷԱԹԵՐԹԻՎԸ ՈՐՊԷՍ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍ

Կարծում եմ, եկաւ այն պահը, երբ ես պէտք է ազդարարեմ, որ, ըստ էության, ես ոչինչ չեմ հայտնագործել: Պարզապէս ի մի եմ բերել քաղաքացիական իրավունքի, տնտեսական իրավունքի և ընտրական իրավունքի հայտնի դրոյթներ: Տնտեսական իրավունքի դրոյթների մասին խոսելիս նկատի ունեմ այն, որ ամեն քաղաքացի ոչ թէ քվեաթերթիկով է ներկայանում ընտրություններին, այլ պետութեան կառավարման իր բաժնետոմսով: Ամեն քաղաքացի ունի երկրի (երկրի կառավարման) մէկ բաժնետոմս, եւ ընտրությունը մի միջոցառում է, որի

ընթացքում քաղաքացիները իրենց ունեցած երկրի կառավարման բաժնետոմսերը փոխանցում են իրենց կողմից վստահության արժանացած միջնորդ անհատին կամ այդ անհատին ընդգրկող միատրամանը: Իր հերթին միջնորդները կայացուցիչ-խորհրդարանականը քաղաքացիների երկրի կառավարմանը մասնակցելու իր ստացած բաժնետոմսերի քանակով քուեարկում է խորհրդարանական քվեարկությունների ժամանակ, ինչպես բաժնետիրական ընկերությունների ընդհանուր ժողովներում քուեարկում են բաժնետերերը կամ նրանց լիազոր ներկայացուցիչները: Այդպես քաղաքացին միջնորդի միջոցով մասնակցում է պետության «բաժնետիրական ընտրութեան» ժողովներին:

Կա նաև տարբերակ՝ հանրաքուե, երբ քաղաքացին ինքնուրույն է օգտագործում երկրի կառավարմանը մասնակցելու իր բաժնետոմսը: Դա ուղղակի ժողովրդավարությունն է: Հանրաքվեի ժամանակ մարդիկ ինքնուրույն տնօրինում են իրենց ունեցած բաժնետոմսեր-քուեաթերթիկները:

Շատ կարևոր է, որ տնտեսական իրավունքի այդ դրույթը գործադրելու ընթացքում քվեարկելու իրավունքից չզրկվի որևէ ներկայ բաժնետեր եւ չանվանայ որևէ բաժնետոմս:

Ընտրությանը մասնակցած, այսինքն՝ երկրի կառավարմանը մասնակցելու ցանկություն հայտնած որևէ քաղաքացու ընտրական իրավունքը՝ բաժնետոմսը, չպետք է ընտրական համակարգի անկատարության պատճառով դուրս մնա: Այսինքն՝ բաժնետիրական ընկերության որոշումներ կայացնելուն մասնակցել ցանկացած բոլոր բաժնետերերի քուեները պետք է մինչև վերջ ներկայացված լինեն խորհրդարանում:

Այժմ տեսնենք, թե ինչ է առաջարկում այն քաղաքացիների քուեների վերաբերեալ, ում թեկնածուները արդեն բարեփոխուած՝ բազմամանդատ առաւելային կամ նոյնպէս բարեփոխուած վարկանիշային համամասնական ընտրակարգերի պայմաններում քիչ քուեներ ստանալով խորհրդարանական չեն դարձել: Լուծումը վերցնում ենք քաղաքացիական իրավունքի այն դրույթներից, համաձայն որոնց մարդիկ կարող են իրենց անունից յանդէս գալու եւ այդ իրավունքը վերափոխանցելու երաշխաւորութիւն՝ լիազորութիւն տալ: Ըստ այդմ ընտրությունների ընթացքում հաջողության չհասած թեկնածուն իրավունք ունի կամ կարող է (բարոյեապէս նաեւ պարտաւոր է) իր ստացած քուեները՝ ձայները, վերահասցեագրել այդ ընտրությունների ընթացքում յաջողության հասած թեկնածուներից որևէ մեկին: Ենթադրում է, որ այդ գործողութիւնը պէտք է կատարուի ընտրութիւնների նախնական արդիւնքների ազդարարումից, ընտրուած թեկնածուների ցուցակները պաշտոնապէս ներկայացնելուց յետոյ մէկ շաբաթուա ընթացքում: Ինչպէս քաղաքացի ընտրություն կատարելու հնարաւորութիւն ունենալ, խորհրդարանական դառնալու տեսակետից յաջողութեան չհասած թեկնածուն պէտք է նոյնպէս ընտրութիւն կատարելու հնարաւորութիւն ունենայ, մի բան որ բացառուած է միամանդատ ընտրական տարածքներում:

Հետեւութիւն, որպէս առաջին պահանջ ամբողջ աշխարհով մեկ պէտք է հակասահմանադրական, մարդու իրավունքները սահմանափակաւ ազդարարուի առաւելային (նաեւ մեծամասնական) միամանդատ ընտրակարգը եւ նրանից բխող «Հաղթողն ստանում է ամենը» գործելակերպ դարձած կարգախօսը: Չպէտք է վախենալ պահանջել օրենքից դուրս ճանաչել այդ հակամարդկային, մեծամասնական համակարգը:

Ժողովրդավարության միջնաբերդ համարվող Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Ֆրանսիան և շատ այլ երկրներ, որոնք օգտագործում են այդ համակարգը, պէտք է շուտափույթ կերպով ձերբազատվեն դրանից անցնելով բազմամանդատ (գոնէ երկմանդատ) կամ վարկանիշային համամասնական (կամ գոնէ առանց արգելանքի տուկոսի համամասնական) ընտրական համակարգի:

ԲԱԶՄԱՄԱՆԴԱՏ ՄԵԾՄԱՄԱՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆԳԸ

Երկմանդատ մեծամասնականի տարբերակը պիտի աւելի հոգեհարազատ լինի մեծամասնական միամանդատ ընտրակարգի սովոր ազգերին, որովհետեւ բազմամանդատն ըստ էութեան հղկում է տասնամեակների, աւելին՝ հարիւրամեակների ընթացքում սրբագործուած միամանդատ մեծամասնական համակարգի:

Աւանդապաշտ մտածողութեան տէր քաղաքացիներն էլ փոփոխութիւնը յեղափոխական չեն համարի, որովհետեւ այդ պայմաններում կպահպանուեն մեծամասնական ընտրական համակարգի ժամանակ գործած ընտրատարածքները: Դրանք պարզապէս կմիատրուեն՝ երկու, երեք եւ այլ քանակի մանդատներին համապատասխան: Այսպէս նկատում ենք, որ բազմամանդատ մեծամասնական մանդատների քանակի աւելացումով կվերանայ կամ նուազագոյնի կհասնի մեծամասնական եւ համամասնական ընտրական համակարգերի միջեւ եղած տարբերութիւնը:

Երկմանդատ ընտրական համակարգում այսօր գոյություն ունեցող 2 հարեւան տարածքներ միատրում են իրար հետ եւ այդ միատրուած ընտրատարածքից կարող են ընտրվել արդեն երկու խորհրդարանական: Եթէ օրինակ ԱՄՆ-ի նահանգներից մեկում այսօր ընտրվում է 40 պատգամավոր, այդ 40-ի թիվը պահպանվում է, սակայն ընտրատարածքների թիվը լինում է ոչ թե 40, այլ 20, և ամեն տարածքից ընտրվում է 2 հոգի:

Բազմամանդատ (մեկ տարածքից երկու եւ ավելի խորհրդարանականները ընտրող) ընտրական համակարգի կողմնակից պետությունների ընտրատարածքներում ընտրություններում ընտրուած են համարոււմ առաջին տեղերում հայտնված՝ տուեալ ընտրատարածքում նախատեսուած խորհրդարանականների՝ մանդատների քանակով, թեկնածուները: Միւս թեկնածուները, անկախ նրանից, թէ քանիսն են նրանք, իրենց ստացած ձայները իրավունք ունեն փոխանցելու ընտրուած թեկնածուներից ում կամենան: Այդ գործողութիւնը պետք է կատարուի ողջախոհ ժամանակահատվածում. մեկ շաբաթուս (առաւելագոյնը տաս օրուս ընթացքում) նախկին թեկնածուները պետք է յայտարարեն եւ ընտրական հանձնաժողով ներկայացնեն, թէ իրենց տրուած քուէները ում են փոխանցում: Այսպիսով՝ ժողովուրդը՝ ընտրողներն են որոշում են, թէ իրենց ընտրատարածքում թեկնածուներից ովքեր են դառնում խորհրդարանական եւ միայն դրանից հետո խորհրդարանական չդարձած մյուս թեկնածուներին հնարաւորութիւն է տրվում իրենց ստացած քուէները ըստ իրենց նախընտրական խոստումների կամ ըստ իրենց հայեցողության փոխանցել այդ ընտրութիւններում յաջողուած թեկնածուներին: Համայն աշխարհում ընդունված՝ խորհրդարանականները քվեարկում են մեկական ձայնով դրոյթը, պահպանվում է միայն խորհրդարանի ներքին աշխատանքները կարգաւորելիս, օրինակ՝ խորհրդարանի խոսնակ կամ որեւէ յանձնաժողովի ղեկավար ընտրելիս: Այդ դեպքում խորհրդարանականները միայն իրենց են ներկայացնում (ոչ իրենց օգտին քուէարկած քաղաքացիներին) եւ իսկապէս յանդէս են գալիս որպէս միասնական կառոյցի իրավահավասար անդամներ: Սակայն երբ խորհրդարանականները յանդէս են գալիս որպէս քաղաքացիների ներկայացուցիչներ, ամեն խորհրդարանական պետք է քվեարկի իր ստացած եւ իրեն փոխանցուած քուէների քանակով: Ժամանակակից տեխնիկական հնարավորություններն այդ առումով ավելի քան բավարար են:

ՀԱՄԱՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Մի քանի խօսք համամասնական ընտրական համակարգի մասին: Պետք է արձանագրել, որ չնայած համամասնական ընտրակարգը մեծամասնականի համեմատութեամբ ավելի ներկայացուցչական է համարվում, եւ իրականում այդպիսին է, բայց եւ այնպէս այն նոյնպէս բոլոր քաղաքացիների ներկայացուցչական մարմինը չէ: Համամասնական ընտրակարգով ընտրությունների ընթացքում նոյնպէս որոշ քաղաքական ուժեր բաւարար քուէներ չստանալու պատճառով կարող են չհայտնվել խորհրդարանում: Դրա հետեւանքով խորհրդարանում չեն յայտնվի, ներկայացուցչական մարմնում ներկայացուած չեն լինի նաեւ այդ ուժերի օգտին քուէարկած քաղաքացիները: Մինչդեռ առանցքային մտտեցումն այն է, որ ներկայացուցչական կառոյցում ներկայացված լինելու հնարավորություն ունենան ընտրութիւններին մասնակցած գրեթէ բոլոր քաղաքացիները: Դա իմ առաջարկած կատարյալ ժողովրդական պետական համակարգերի հիմնական պայմանն է: Դրանից ելնելով համամասնական ընտրական համակարգ որդեգրած պետություններին նոյնպէս հորդորվում է որդեգրել խորհրդարան չանցած ընտրական միավորների ձայները խորհրդարան անցածների օգտին փոխանցելու, այսինքն՝ ստացած քվէները վերահասցեագրելու գործելակերպը:

Նկատենք, որ աշխարհի շատ երկրներում արդեն կիրաւոյն աւանդուած նախընտրության (փրայմրիի) համակարգը ընտրությունների վերջնական գործընթացի հետ համատեղող վարկանիշային համամասնական ընտրակարգը, համամասնական ընտրական համակարգի բոլոր տարբերակներից լաւագոյնն է: Այն նախընտրելի է հիմնականում այն պատճառով, որ քաղաքացիներին է վերապահուում համամասնական ցուցակով առաջադրված՝ ընտրական միավորներում ընդգրկված անձանց հերթականութեան, ցուցակում նրանց յաջողականութեան որոշումը: Կուսակցությունը կամ ընտրական միավորը ներկայացնում է նախընտրական ցուցակ, սակայն դա լոկ նախնական ցուցակ է: Քվեարկության ժամանակ ընտրողներն իրավունք ունեն կուսակցության օգտին քուէարկել նշելով թէ այդ կուսակցութեան ցուցակում նշուած որ թեկնածուն է նախընտրելի: Քուէարկելով այդ թեկնածուի օգտին, նրանք հնարաւորութիւն են տալիս ընտրական հանձնաժողովներին վերադասավորել ընտրական միավորների կողմից ներկայասված ընտրական ցուցակը՝ ըստ ստացած ձայների քանակական առաւելութեան: Եթէ քաղաքացին քուէարկում է կուսակցութեան օգտին տողում, դա նշանակում է, որ ինքը դեմ չէ կուսակցութեան ընտրացուցակի յաջողականութեանը: Այդ տեսակի քուէները հաւասարապէս բաշխուում են բոլոր խորհրդարանականներին:

Եթէ ընտրական միավորի ներկայացրած ցուցակի 20 հոգուց խորհրդարան է անցնում միայն 6-ը, այդ ցուցակի հաջորդ տեղերում ձայներ ստացած թեկնածուները մեկ շաբաթվա ընթացքում իրենց ձայներն արդեն պաշտոնապէս փոխանցում են իրենց կուսակցության խորհրդարանական դարձած թեկնածուներին: Բացառիկ դեպքերում իրենց հայեցողութեամբ նրանք կարող են իրենց քուէները փոխանցել այլ կուսակցության խորհրդարանականներին: Դա քիչ է հավանական, բայց բացառել չի կարելի, որովհետեւ եթէ քաղաքացիները ձայն են տվել որոշակի անձի, այդ քաղաքացիները նաև վստահել են իրենց ձայները տնօրինելու իրավունքը:

ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՉՀԱՍՏ ԹԵՎՆԱԾՈՒՆԵՐԻ ՔՈՒԷՆԵՐԻ ՃԱԿՍԱՍԳԻՐԸ

Ինչպես մեծամասնական ընտրական համակարգի պայմաններում, այնպես էլ համամասնականում յաջողութեան չհասած, այսինքն՝ ընտրություններում պարտուած թեկնածուների քուէները մէկ շարքովա ընթացքում պէտք է փոխանցուեն խորհրդարանական դարձած անհատներին: Կարող են նաեւ ընտրական միավորին՝ կուսակցութեանը փոխանցուել: Դա նշանակում է այդ քուէները պէտք է հաւասարապէս բաշխուեն խորհրդարանական դարձած թեկնածուների միջեւ հաւասարապէս:

Ենթադրենք, նախկին թեկնածուն ստացել է 600 ձայն, իսկ իր թիմից խորհրդարան է անցել 6 հոգի: Եթէ նա իր քուէները փոխանցում է կուսակցությանը, ապա կուսակցության 6 խորհրդարանականներն էլ ստանում են՝ ամեն մեկը հարյուրական ձայն: Այս մոտեցման կիրառման արդյունքում ընտրություններին մասնակցած քաղաքացիներից որևէ մեկի ձայնը դուրս չի մնում խորհրդարանից:

Համամասնական համակարգերում խորհրդարանական քվեարկությունների ժամանակ խորհրդականները նույնպէս քվեարկում են ըստ իրենց ստացած քուէների քանակի, սակայն եթէ ներքին տարաձայնություններ չունեն քուէարկուող հարցի վերաբերեալ, կուսակցութեան խմբակցութեան ներկայացուցիչը կարող է քուէարկել կուսակցութեան ստացած ընդհանուր ձայների քանակով:

Այս համակարգերի որդեգրումը պէտք է ուղեկցուի խորհրդարանականի փոխարինողի հասկացութեան ընդունումով: Բոլոր խորհրդարանականները պաշտոնաստանձման պահից պէտք է ներկայացնեն իրենց փոխարինողներին: Փոխարինողը խորհրդարանականը ստանձնում է խորհրդարանականի պաշտոնը խորհրդարանականի անաշխատունակութեան պայմաններում: Մինչ այդ նա որեւէ իրաւասութիւն կամ լիազորութիւն չունի: Իսկ խորհրդարանական դառնալու պահից նա իրաւունք է ստանում մասնակցել խորհրդարանի աշխատանքներին եւ քուէարկել նոյնքան քուէներով, որքանով որ քուէարկում էր իր փոխարինած խորհրդարանականը: Խորհրդարանականի լիազորութիւններ ստացած խորհրդարանականը պարտաւոր է անմիջապէս ներկայացնել նոր փոխարինող խորհրդարանականին:

Կան նաև ընտրական այլ համակարգեր, որոնք ներկայացուցչականութեան տեսակետից որևէ առավելություն չունեն: Դրանց հատուկ չեմ անդրադառնում հիմնականում այն պատճառով, որ ներկայացուած երկու հիմնական տարբերակներից որևէ մեկը ընտրելու դեպքում լուծվում է ամենակարևոր՝ ներկայացուցչական մարմինների կատարյալ ներկայացուցչական դառնալու հարցը:

Խառը խորհրդարանական համակարգերով ձևավորվող խորհրդարանների մասին խօսելիս, մենք պէտք է մեր ստացած արդյունքներն ամփոփենք մեծամասնականի մասով առանձին, համամասնականով առանձին, հետո այդ տոկոսները գումարենք իրար և բաժանենք 2-ի, որպէսզի ընդհանուր պատկերացում ունենանք, թե քանի տոկոսանոց ներկայացուցչականություն է ապահովում տվյալ համակարգի խորհրդարանը:

ԺՈՂՈՎՐԴՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՌԱՎՈՐԴ ԿԱՌԱՎԱՐԵԼԻՈՒԹԵԱՆ ԶԳՏՈՒՄԸ

Խորհրդարանական պետություններում խորհրդարաններին է վերապահուում կառավարության ձևավորման գործառնալը եւ դրա հետ կապուած՝ կառավարական ճգնաժամերից խուսափելու հիմնաւորումը շատ պետություններում արգելանքի տոկոս սահմանելու ճանապարհով նուազեցուում է խորհրդարանների ներկայացուցչականութիւնը՝ ժողովրդավարութիւնը: Ստացուում է, որ համեմատական փոքրամասնություններին ճնշելու, որոշ ժամանակայատուածով նրանց անեղացնելու ճանապարհով է բարձրացուում կառավարման արդյունավետութիւնը կամ կառավարական ճգնաժամերի հնարաւորութիւնը նուազագոյնի հասցնելու ցանկութիւնը: Այդպիսի մոտեցումը կարող է տեղ գտնել միայն այնպիսի հասարակություններում, որտեղ ընդհանրական պայմանաւորուածութիւն է ձեռք բերուում ժողովրդավարութիւնը կառավարելիութեանը ստորադասելու հարցում: Հետեւաբար, գործ ենք ունենում մի հասարակութեան հետ, որի խնդիրը ոչ թէ ժողովրդավարութեան, այլ կառավարելիութեան ապահովումն է:

Արդեօ՞ք կարող ենք ժողովրդավարութիւնը բարձրագոյն արժեք համարող հասարակությունում արդարացուած համարել ժողովրդի ներկայացուցչականութեան սահմանափակումը յանուն կառավարելիութեան: Մի թէ կառավարելիութեան բարձրացումը գերակայ առաջնահերթ խնդիր է: Ինքնին ժողովրդավարութիւն բառն յուշում է, որ այդ եզրից ժողովուրդ բառի բաժնեմասն նուզեցնելու միտումը արդիւնքում կարող է հանգեցնել ցանկացած բռնակալի մեծագոյն երազի իրականացմանը: Կմնա միայն վարելու, կառավարելու, իշխելու յատուածը: Սա, իհարկէ, ժողովրդավարութեան հետ որեւէ կապ չունի::

Խորհրդարանական համակարգեր ասելիս եւ միշտ նկատի եմ ունեցել խորհրդարանի ընտրակարգը և աշխատակարգը: Եթէ ընդհանուր առմամբ դրանք իրար հետ կապված երևոյթներ չեն, ապա կատարյալ ժողովրդավարության մոդելը ամրագրելու ճանապարհին մենք կտեսնենք, որ անմիջականորեն զգացվում է այդ երկու իրարից անկախ երևոյթները միավորված տեսնել:

Այստեղ պետք է եւս մէկ անգամ նշել, որ մեր ուշադրության կիզակետում եղել է նաեւ մտում է համակարգային մոտեցումը: Առանձին երևույթներ, օրինակ ընտրախախտումներ՝ կեղծիքներ, կրկնակի քուէարկութիւններ, ընտրողներին նիւթապէս շահագրգռելը, ցուցակներում ընտրողների հաւելագրումը եւ այլն, եւ այլն պետք է կարգավորվեն այլ միջոցներով, ընդհուպ մինչև իրավապահ եւ ազգային անվտանգութեան մարմինների միջամտությամբ: Մեր նպատակը համակարգային անկատարութիւններից խուսափելու ուղիների մատուցումն է: Ինչպէս բոլոր ոլորտներում այդպէս էլ ժողովրդավարութեան հարցում համակարգային՝ ռազմավարական հստակ դիրքորոշումն է արմատական առաջընթաց ապահովող ճանապարհը:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՃԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Այժմ անդրադառնանք ժողովրդավարութեան համար խիստ էական՝ ժողովրդի պետութեան կեանքի մասնակցութեան հաճախականութեան հարցին: Ժողովրդավարութիւն եզրը իր մէջ ժամանակային որեւէ տարր չի պարունակում, աւելին ընդծում է իր տիրոջների մշտատեւութիւնը, անսահմանափակութիւնը:

Այնուամենայնիւ երկրի կառավարմանը ժողովրդի մասնակցութեան հարցում ժամանակային սահմանափակումներ կան: Ուղղակի ժողովրդավարական գործողութիւններ՝ հանրաքուէներ կազմակերպում են ըստ անհրաժեշտութեան իսկ միջնորդաւորուած մասնակցութեան մարմինների՝ խորհրդարանների եւ միւս ընտրովի հաստատութիւնների ընտրութիւններն իրականացում են որոշակի պարբերականութեամբ:

Ժողովրդավարութեան վերաբերեալ բոլոր միջազգային փաստաթղթերում ընդգծում է որոշակի պարբերականութեամբ իրականացուող ընտրութիւնների կարեւորութիւնը ժողովրդավարութեան համար: Որոշ մասնագէտներ շեշտադրում են նաեւ ընտրութիւնների հաճախականութիւնը, սակայն քչերն են (այնքան քիչ, որ եւ չեմ կարող վկայակոչել որեւէ մէկին), որ անմիջական կապ են տեսնում ժողովրդավարութեան մակարդակի եւ ընտրական գործընթացների հաճախականութեան մէջ: Մինչդէռ բաւական է վերադառնալ ժողովրդավարութիւն բառի իմաստային պարունակութեանը՝ ժողովրդավարութիւն՝ ժողովրդի մասնակցութիւն երկրի կառավարմանը իր կողմից ընտրութիւնների միջոցով ձեւաւորուած մարմինների միջոցով, որպէսզի կոտակենք, որ ընտրութիւնների հաճախականութիւնը ուղիղ համեմատական է ժողովրդավարութեան մակարդակին: Այսինքն՝ առանձին վերցրած ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի երկու տարին մէկ իրականացուող ընտրակարգի շնորհիւ ժողովրդավարութիւնն այդ երկրում արդէն երկու եւ կէս անգամ աւելի է քան հինգ տարին մէկ խորհրդարանի ընտրութիւն իրականացնող Հայաստանի Հանրապետութիւնում:

Ի դէպ, մինչ 2005 թ. սահմանադրական «բարեփոխումները» Հայաստանում խորհրդարանը ընտրում էր չորս տարին մէկ: Եւ լինելով սահմանադրական բարեփոխումների նախաձեռնողն ու նախագահը առաջարկում էի աւելացնել խորհրդարանի ընտրութիւնների հաճախականութիւնը հասցնելով այն եթէ ոչ ԱՄՆ օրինակով երկամեայ, ապա գոնէ եռամեայ պարբերականութեան: Ինչպէս աշխարհի բոլոր երկրներում այդպէս էլ Հայաստանում քիչ չեն այն ուժերը, որոնք էութեամբ ժողովրդավարական չլինելով, աւելին՝ դեմ լինելով քաղաքական գործընթացներին ժողովրդի մասնակցութեանը, սարսափում են ընտրութիւններից եւ իբրեւ թէ մտահոգուած «ընտրութիւնների պատճառով առաջացող լարուածութիւնից», պատրաստ են նոյնիսկ ընդհանրապէս հրաժարուել ընտրութեան ինստիտուտից: Այդպիսի մարդիկ եւ ուժեր էին իշխում Հայաստանում քսաներորդ դարի վերջին: Իմ նախաձեռնած գործը նրանք նախ փոխանցեցին իրենց կամակատարներին, ապա նուազեցրին թէ խորհրդարանի (մէկ քառորդով) եւ թէ տեղական ինքնակառավարման մարմինների (մէկ երրորդով) ընտրութիւնների հաճախականութիւն: Դրա հետեւանքով առանց այն էլ ժողովրդավարական աւանդույթներ եւ մշակույթ չունեցող Հայաստանեան պետական համակարգում ժողովրդավարութեան մակարդակը նուազեց մտատուրապէս երեսուն տոկոսով:

Առանց թուաբանական մատուցման էլ, իհարկէ, ակնյայտ է, որ եթէ մենք խնդրին նայում ենք ժողովրդավարության տեսանկյունից, ապա ժողովրդավարությունն այն դեպքում է արդյունավետ, երբ ժողովուրդը հնարավորին չափ հաճախակի է մասնակցում այդ գործընթացին: Եթէ ուղղակի ժողովրդավարության դեպքում՝ Շվեյցարիայի օրինակով, դրանք հանրաքուէներն են, ապա միջնորդավորված ժողովրդավարության պայմաններում դրանք միջնորդ կառույցներն են: Քանի որ քաղաքացու վերաբերմունքը կարող է նույնիսկ անհատական մասնակցության դեպքում հանգամանքների ազդեցության տակ կամ փորձառության ձեռքբերումով, փոխվել, ապա կարելու է որ այդ տեղաշարժը առարկայօրէն կեանքի կոչելու՝ նոր ընտրութիւններով նոր ուղի որդեգրելու հնարաւորութիւն ունենայ: Ինչպէս վերելում նշուեց, ժողովրդավարության մասնագէտները մշտապէս շեշտադրում են պարբերաբար իրականացուող ընտրութիւնների կարեւորութիւնը: Այս ճանապարհով էլ կարելի նոյն եզրակացութեանն հանգել: Եթէ պարբերականութիւնն օգտակար է, ապա աւելի մեծ պարբերականութիւնը՝ հաճախակի տեղի ունեցող ընտրութիւններն անտարակոյս շատ աւելի օգտակար պիտի լինեն ժողովրդավարականութեան մակարդակը բարձրացնելու տեսանկյունից:

Մեր բանաձևում կայ նաև ընտրությունների հաճախականության հետ կապուած մի գործակից: Նրա օգնութեամբ որոշակի գնահատական է տրվում տվյալ երկրի ժողովրդավարությանը՝ կախված խորհրդարանի ընտրությունների հաճախականությունից: Նախնական տարբերակում սահմանուած էր, որ 3 տարին մեկ ընտրվող խորհրդարանների համար այդ միավորը 1-ն է, 2 տարին մեկ ընտրվող խորհրդարանների դեպքում՝ 1.2, 4-ի դեպքում՝ 0.8: Ասինքն՝ այն թիվը, որը պետք է ստանանք տվյալ պետության ժողովրդավարության մակարդակը հաշվելիս բազմապատկվում է նաև այս գործակցով: Ներկայիս, յուսով եմ արդէն վերջնական տարբերակում գործակցի առաւելագոյն թիւը 1-ն է:

Ինչ վերաբերում է խորհրդարանականների յետկանչի դրույթին, ապա ընտրությունների հաճախականության ավելացումով վերանում է այդ երեւոյթի անհրաժեշտութիւնը: Հաճախականութեան աւելացման անհրաժեշտութիւնը վերաբերում է, թէ խորհրդարանական, եւ թէ գործադիր իշխանության ձևավորմանը:

Ամփոփելով ընդօժենք, որ խորհրդարանական համակարգերի ժողովրդավարականության համար շատ կարևոր են ընտրություններին մասնակցող քաղաքացիների հարիւր տոկոսանոց ներկայացուցչականութեան երաշխաւորումը եւ ընտրությունների հաճախականութիւնը:

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԳԼՈՒԽ ՈՒ ԳՈՐԾԱՂԻՐ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

Աշխարհի շատ պետություններ ունեն պետության գլուխ հասկացությունը, որը կամ սահմանդրական միապետություններում ժառանգաբար փոխանցվող միապետի պաշտոնն է, կամ էլ, որը բավական լայն տարածում ունի խորհրդարանական կամ կիսախորհրդարանական- կիսանախագահական համարվող պետություններում, դա ժողովրդի կողմից ընտրված նախագահի պաշտոնն է: Նախագահական պետություններում, ինչպիսինն է ԱՄՆ-ն, լատինամերիկյան եւ այլ երկրներ են, կա գործադիր իշխանութեան՝ կառավարության ընտրովի ղեկավար, որ պետության առաջին դեմքի հետ նույնացվում է, սակայն եվրոպական երկրներում հանդիպող պետության գլուխ հասկացությունը բացակայում է: Գործադիր իշխանութիւնը նախագահական պետություններում ձևավորվում է ժողովրդի կամքով պարբերաբար տեղի ունեցող ընտրությունների միջոցով:

Պետութեան գլխի ընտրութիւնը տարբեր երկրներում տարբեր հաճախականութեամբ է տեղի ունենում, սակայն ակնյատ է միտումը, բացառութեամբ Ռուսաստանի եւ մի քանի պետութիւնների, նուազեցնել ժամկետ, որ նոյնն է՝ աւելացնել ընտրութիւնների հաճախականութիւնը: Օրինակ՝ Տրանսիայում նախագահական ընտրութիւնների 7 տարին տևական քննարկումների եւ հանրաքուէի արդյունքում վերածվեց 5 տարվա:

Իմ բանաձևում ուղղակի գործադիր իշխանության ղեկավարի ընտրութիւն չունեցող պետությունների ժողովրդավարության գործակիցը բազմապատկվում է 0.5 միավորով, որը նշանակում է, որ այդ պետության ժողովրդավարության մակարդակը ուղիղ երկու անգամ պակաս է: Եթէ գործադիր իշխանության ղեկավարը ուղղակի չի ընտրում իր ժողովրդի կողմից՝ նուազում է ժողովրդի մասնակցութիւնը, որ նոյնն է՝ ժողովրդավարութիւնը: Միջնորդավորված ընտրութիւնը նշանակում է ժողովրդի՝ անմիջական ղեկավար ընտրելու հնարավորութեան փոխանցում նաեւ սեփական նկատառումներով առաջնորդուող միջնորդներին: Եթէ ԱՄՆ դեպքում այդ միջնորդ ընտրիչներն ժողովրդի կողմից ընտրում են հենց գործադիրի ղեկավար ընտրելու եւ միայն այդ նպատակով, ապա խորհրդարանական հանրապետութիւններում գործադիրի ընտրութիւնն իրականացնում են գործադիր իշխանութեան հակակշիռ հանդիսացող օրենսդիր իշխանութեան ներկայացուցիչները:

Ինչ երանելի հակակշիռ. . . Քեզ հակակշռելու կոչուած հաստատութեան ղեկավարին ոչ թէ ժողովուրդն է ընտրում, այլ խորհրդարանական դարձած քաղաքական գործիչներն իրենց հավակնութիւններով ու նկատառումներով (եւ հազիւ թէ ժողովրդավարության նկատմամբ սիրով):

Քաղաքացին գործադիր իշխանութեան ղեկավար ընտրելիս պետք է անմիջականորեն եւ ուղղակիորեն մատնանշի, թէ ում է ինքը նախապատվութիւն տալիս: Ի տարբերութեան ժողովրդի ներկայացուցչական մարմնի՝ գործադիր իշխանութեան ղեկավարը կարող է չներկայցնել բոլորին, նա դառնում է բոլորի նախագահը կամ վարչապետը, սակայն որպէս գործադիր իշխանութեան ղեկավար՝ ընդամենը ենթակա է բոլորի կողմից ընտրված ներկայացուցչական մարմնի վերահսկողութեանը: Հենց գործադիր իշխանութեանն է տրված որոշակի գործառոյթներ իրականացնելու իրավասութիւնը, և քանի որ այդ գործառոյթները կարող են երբեմն չհամապատասխանել ժողովրդի բոլոր շերտերի ցանկութիւններին, ժողովրդի բոլոր շերտերը վերահսկողութիւն են իրականացնում այն իմաստով, որ չտոնահարվի իրենց իրավունքները, սակայն հիմնական ուղղութիւնը որոշում է ժողովրդի այն քանակութիւնը, ով առավելութիւն է ստացել գործադիրի ընտրութեան ժամանակ: Պակտերավոր ասած մեծ

կառքը պետք է մի ձիավար ունենա, որը սանձերը պետք է պահի իր ձեռքում, կառքում նստած ուղևորները կարող են որոշ մարդկանց ընտրել որպեսզի կառքապանի գործողությունները վերահսկեն:

Գործադիր իշխանության առաքելությունն է գլխավորել պետության գործադիր հատվածը, սակայն ժողովրդից կողմից ուղղակի ընտրված ներկայացուցչական հակակշռի պայմաններում: Իր հերթին գործադիրն էլ հակակշռում է օրենսդիր իշխանությանը:

Տեսական հակասության ժամանակ գերակայություն է ստանում ներկայացուցչական մարմինը իր ձայների 2/3-ով: ղեկն 200 տարի առաջ ԱՄՆ-ում գտնված այս հարաբերակցությունը թվաբանորեն ճշգրիտ է, որովհետև եթե խորհրդարանական պարզ մեծամասնությունը կարող է պակաս լինել նախագահի ստացած ձայներից, ապա, որպես կանոն, խորհրդարանական ձայների 2/3-ը իր հերթին կգերակայի նախագահի ստացած ձայներին: Այնպես որ տեղին է այն մտաեցումը, որ ժողովրդի կողմից ընտրված գործադիր իշխանավորի արգելափակումը խորհրդարանի նկատմամբ կարող է հաղթահարուել խորհրդարանի՝ ներկայացուցչական մարմնի ձայների 2/3-ով:

Մեր բանաձևում գործադիր իշխանության ղեկավարի ընտրությունը եւ այդ ընտրության հաճախականությունը համարվում են ժողովրդավարության կարևորագույն հայտանիշերից եւ ավելացնում կամ պակասեցնում են պետության ամբողջական ժողովրդավարության մակարդակը:

ԴՍՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Իշխանության երեք ճիւղերից դատականի ժողովրդավարականության հաշուարկելի եւ թուաբանօրէն արտայատելի ձեւ չի առաջարկում: Կարելու է համարում այս կամ այն կերպ դատական իշխանությունների ձեւաւորման եւ գործառնությունների՝ արդարադատության իրականացման մէջ ժողովրդի՝ քաղաքացիների մասնակցությունը: Մասնավորապէս՝ առաջին ատենի դատարանների որոշումները վերաքննելու իրաւասութեամբ օժտուած երկրորդ աստիճանի դատավորները կարող են լինել ընտրովի: Ժողովրդի մասնակցութեան՝ ժողովրդավարականության դրսևորում է նաեւ երդվյալ ատենակալների հաստատության գոյությունն ու գործունէությունը: Այս երկու գործոններից մէկի առկայությունն արդէն մենք բաւարար ենք համարում դատական համակարգը համեմատաբար ժողովրդավարական համարելու համար: Իսկ այն երկրներում, որտեղ ժողովրդի ղերակատարությունը ընդհանրապէս բացակայում է, պետք է ընդունենք, որ այդ երեւոյթը նոյնպէս ազդելու է պետության ժողովրդավարականության մակարդակի վրա: Այսպիսով, միայն նշանակովի դատաւորներով համալրուած դատական համակարգ ունեցող պետությունները, բնականաբար, նվազ ժողովրդավարական կարող են համարվել, քան ընտրովի դատավորներ ունեցող պետությունները: Դատական համակարգի ժողովրդավարականութեան դրսևորումներից կարելի է համարել նաեւ երդուալ ատենակալների հաստատութեան առկայութիւնը: Դրանից ելնելով իմ բանաձևում դատական համակարգի ժողովրդավարականութեան գործակիցը նոյն արժեքն է ունենում ընտրովի վերադաս դատարանների կամ երդուեալ ատենակալների հաստատութեան կամ միաժամանակ նրանց երկուսի առկայութեան դէպքում: Մա նշանակում է, որ դատական համակարգը կարող է ժողովրդավարական համարուել նաեւ նշանակովի դատավորների պայմաններում պայմանով որ գործի երդվյալ ատենակալների հաստատությունը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Պետութեան ժողովրդավարականության կարևոր գործոններից է նաև տեղական ինքնակառավարման (ՏԻ) համակարգը: Վերջինիս գոյությունը՝ ընտրովի կառույցների տեսքով ավելացնում է ժողովրդավարության մակարդակը տվյալ երկրում: Տեղական ինքնակառավարման ընտրովի մարմինների բացակայությունը, բնականաբար, նվազեցնում է ժողովրդավարությունը: Մա արտահայտվում է բանաձևի որոշ գործակիցներով: ՏԻ մակարդակով իշխանության ճյուղերի հակակշռումը եւս ի նպաստ ժողովրդավարության կարող է գործել , բայց քանի որ խոսքն ընդհանուր պետությանն է վերաբերում, եւ այս դէպքում բավարարվում եմ միայն ընտրովիության գաղափարն ամրագրելով: Իհարկէ, ճիշտ՝ աւելի ժողովրդավարական է ՏԻ այն համակարգը, որում ՏԻ ներկայացուցչական մարմինները՝ ավագանիները ինքնուրույն կառույց է: Դա նշանակում է, որ այն ընտրուում է տուեալ համայնքի բնակիչների կողմից ուղղակի ընտրութիւններով եւ նոյն համայնքի բնակիչների ընտրած համայնքի ղեկավարին գուգահեռ, նրան հակակշռելով գործում է ինքնուրոյն՝ ունի իր կազմից ընտրուած ղեկավար: Համայնքի գործադիր մարմինը իր հերթին ինքնուրույն պետք է գործի, սակայն նրա գործունէութիւնը

պետք է ուղեկցուի իր հակակշիռ, համայնքի ծախսագումարը հաստատող համայնքի ներկայացուցչական մարմնի գործունեությամբ:

ՏԻ համակարգում նույնպես ժողովրդավարության տեսանկյունից խիստ կարևոր է ընտրությունների հաճախականությունը: Բոլոր այն հասարակություններում, որտեղ վախենում են հաճախակի իրականացուող ընտրություններից, ընտրություն երեւոյթը չի ընկալում որպէս մարդու իրավունքների՝ երկրի ու համայնքի կառավարմանը մասնակցելու իրաւունքի դրսեւորման, իրականացման սոսն: Հաճախական ընտրություններից խուսափելը նշան է այն բանի, որ այդ միջավայրում դեռեւս չի կայացել ընտրուելու եւ ընտրելու միջոցով քաղաքական կեանքին մասնակցելու մշակույթը: Դա վկայութիւնն է նաեւ մէկ այլ շատ աւելի արատաւոր՝ իշխանական լծակներին ամեն գնով տիրանալու եւ դրանք այլոց փախցնելու մտքի նկատմամբ թշնամաբար տրամադրուած լինելու ավագակաբարոյ հոգեբանության գերակայութեան:

Խորհրդարանների, նախագահների եւ համայնքային ընտրութիւնների հաճախականութիւնը նուազեցնելու կողմնակիցները որպէս կանոն իրենց տեսակէտն հիմնաւորում են «հերթական լարուածութիւնից» խուսափելու եւ կայունութիւն ապահովելու ցանկութեամբ: Այդորակ մոտեցմանն անկեղծօրէն հաւատացող մարդկանց պարզապէս պէտք է յուշել, որ իրենք ակամայ աջակցում են ընտրութիւններն ընդհանրապէս վերացնելու, ժողովրդավարութիւնն իրենցով փոխարինելու տրամադրուած ցածրորակութիւններին:

ԴԱՇՆԱՅԻՆ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Պետությունների ժողովրդավարականության բանաձեւն ասպարէզ իջեցնելիս՝ 2003 թուականին ես նշել էի, որ, ցավոք սրտի, այդ բանաձեւը կիրառելի չէ դաշնային (Ֆեդերալ) պետությունների համար: Նկատի էր առնված այն, որ դաշնային պետություններն ընդհանրապէս 2 ներկայացուցչական մարմիններ են ունենում.

ներկայացուցչական մարմին, որը ներկայացնում է քաղաքացիներին եւ ներկայացուցչական մարմին, որը ներկայացնում է դաշնության ենթականերին՝ պետությունների կամ, ԱՄՆ դէպքում՝ նահանգներին: ԱՄՆ-ի օրինակով, նահանգներից մեկը կարող է ունենալ 40 մլն բնակչութիւն, միւսը՝ 2 մլն, սակայն նրանք հավասարապէս՝ հաւասար քանակութեամբ պատգամաւորներով են ներկայացում Մենատում: Եթէ քաղաքացիների ներկայացուցչական մարմնում կարևոր էր համարվում քաղաքացիների ներկայացուցչականութեան ապահովումը, ապա դաշնային պետության դաշնային ենթակաների ներկայացուցչական մարմնում երաշխավորվում է դաշնային պետության դաշնային ենթակաների իրավահավասարությունը: Այդ ելակէտային պայմաններում անհնարին էր թուում դաշնութեան ենթակաների իրաւահաւասարութիւնը մարդկանց՝ քաղաքացիների իրաւահաւասարութեանը զուգակցելը: Կրկին ԱՄՆ օրինակով, նահանգների իրաւահաւասարութիւնն արտայայտում է իւրաքանչիւր նահանգից 2 սենատորներ ներկայացնելով: Թվում էր, թէ այդ կառուցում քաղաքացիների իրավունքների հիմք՝ իրաւահաւասարութեան նկատմամբ ուշադրության դրսեւորումը տեղին չէ: Սակայն երեք տարի առաջ՝ 2009 թվականին, նաեւ ինձ համար անակնկալ գտնուեց նաեւ դաշնային պետութեան դաշնային ենթակաների ներկայացուցչական մարմինների էութիւնը արտայայտել եւ տարածքների, եւ այդ տարածքների ընտրողների ներդաշնակ ներկայացուածութեամբ: Լուծումը դարձեալ ներկայացնեմ ԱՄՆ օրինակով: Դաշնային ներկայացուցչական մարմնի՝ Մենատի ընտրություններում, որտեղ դաշնության ենթակաների՝ նահանգների երկուական ներկայացուցիչներն ընտրվում են նոյն նահանգների ժողովրդի կողմից, ժողովրդից ստացած քուէները բաշխւում են թէկնածուների վրայ ըստ նրանց ստացած քուէների տոկոսային հարաբերակցութեան: Եթէ նահանգում երկու սենատորների ընտրութեան համար առաջադրուել են ութ թէկնածուներ եւ նրանք ստացել են Ա-ն՝ 8, Բ-ն՝ 7, Գ-ն՝ 5, Դ-ն՝ 4, Ե-ն՝ 3, Զ-ն՝ 2, Է-ն՝ 2 եւ Ը-ն՝ 1 միլիոն քուէներ, տուեալ նահանգը ներկայացնող սենատոր են դառնում 8 եւ 7 միլիոն քուէներ ստացած Ա եւ Բ թէկնածուները: Նախնական արդիւնքների ազդարարումից յետոյ ողջամիտ ժամանակայատուածում յաջողութեան չհասած թէկնածուները փոխանցում են իրենց ստացած քուէները սենատոր դարձած թէկնածուներին: Արդիւնքում Ա-ն ունենում է, օրինակ՝ 8+5+3+2=18 մլն քուէ, իսկ Բ-ն՝ 7+4+2+1= 14 մլն քուէ: Տոկոսային հարաբերակցութեամբ Ա-ն ունի տուեալ նահանգի ընտրողների ձայների 56.25%-ը եւ Բ-ն՝ ընտրողների ձայների 43.75%-ը:

Ամեն դաշնային միավոր, դաշնության ենթակաների ներկայացուցչական մարմնում՝ Մենատում, ներկայանում է ոչ թէ երկուական սենատորական ձայներով, այլ իր նահանգի ընտրողների ձայների 100 տոկոսով: Այսպիսի մոտեցումն ընդունելուց եւ սահմանադրութեամբ ու օրէնքներով ամրագրելուց յետոյ Մենատի քուէարկութիւններում սենատորը քուէարկում է ոչ թէ մէկ ձայնով՝ սենատորական քուէով, այլ իր նահանգից իր ստացած եւ իրեն փոխանցուած քուէների տոկոսի չափով: Այսինքն՝ վերելում նշածս Ա-սենատորը քուէարկութիւններին մասնակցում է 56.25 միաւորով, իսկ Բ-ն՝ 46.75 միաւորով: Նոյն կերպ բոլոր նահանգներից ընտրուած սենատորները: Մենատն այդ դէպքում կունենայ ոչ թէ 100 սենատորական քուէ, այլ 5 000 տոկոս կամ միաւոր: Այս կարգը կարող է առաջին հայացքից անհասկանալի իրավիճակ ստեղծել, սակայն միայն առաջին

հայացքից: Օրինակ՝ քուեարկութեան ժամանակ կարող է սենատի ձայների մեծամասնութիւնն ստացած՝ 2501 միաւոր (տոկոս) ապահոված սենատորների թիւը՝ սենատորների քանակը, ենթադրենք՝ 40, պակաս լինի 2 499 տոկոս (միաւոր) ունեցող սենատորների քանակից, ենթադրենք՝ 60: Այս կերպ կհաստատուի, որ այդ դաշնային երկրում անգամ դաշնային ենթակայաների ներկայացուցչական մարմնի՝ սենատի մակարդակով որոշումներ ընդունելիս առաջնային կարեւորութիւն է ստանում քաղաքացիների դիրքորոշումը, իսկ սենատորներն ընդամենը նրանց միջնորդ ներկայացուցիչներն են:

2010 թուականից Պետութիւնների ժողովրդավարականութեան իմ առաջարկած բանաձեւում տեղ գտաւ նաեւ դաշնային պետութիւնների դաշնային ենթակայաների ներկայացուցչական մարմինների ներկայացուցչականութեան վերաբերող գործակիցը:

Այս լուծումը գտնելուց յետոյ ես աւարտուած եմ համարում մարդու իրաւունքների հիման վրայ ժողովրդավարութեան առջեւ ծառայած մարտահրաւրների պատասխանները գտնելու իմ աշխատանքը: Հաւակնություն չունեմ այս բանաձեւն համարել կատարելութիւն, սակայն չեմ կասկածում, որ դէպի կատարել ժողովրդավարութիւն տանող առայսօր ներկայացված ժողովրդավարության մակարդակ քննելու առթիւ արված յաջողուած փորձերից մեկն է:

**ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԶԵՒԸ
ՆԵՐԿԱՅԱՆՈՒՄ Է ԱՅՍ ՏԵՍՔՈՎ՝**

$$PSD = \frac{R}{V} \times (F \times E \times J \times L \times U \times F) \times 100\%$$

PSD-ն Պետութիւնների ժողովրդավարութեան տոկոսն է (The percentage of the States' Democraticity) □

R –ը խորհրդարանական ընտրություններին մասնակցող եւ ընտրությունների արդյունքում խորհրդարանում ներկայացուցիչ ունեցող քաղաքացիների թիվն է.

V – ն ընտրությանը մասնակցող քաղաքացիների թուաքանակն է.

F –ը խորհրդարանական (նաեւ միւս) ընտրությունների հաճախականութեան գործակիցն է: Այն փոփոխուած է կախուած ընտրությունների հաճախականութիւնից: Եթէ ընտրություններն իրականցվում են 2 տարին մեկ անգամ, ապա F=1, եթէ ընտրությունները տեղի են ունենում 3 տարին մեկ անգամ, ապա՝ F=0.9, 4 տարին մեկ տեղի ունենալու դէպքում F=0.8, 5 տարին մեկի դէպքում՝ F=0.7, եւ եթէ խորհրդարանը ընտրվում է 6 տարին մեկ, ապա F=0.6 □

E – ն գործադիր իշխանության ընտրության կամ նշանակվի լինելու գործակիցն է: Եթէ գործադիր իշխանության ղեկավարը նշանակվում է խորհրդարանի կողմից, ապա E=0.5, ն երբ նա ընտրվում է ուղղակիորեն ժողովրդի կողմից, ապա E=1:

F –ը այս դէպքում ընտրվի գործադիր իշխանութեան ղեկավարի ընտրությունների հաճախականութեան գործակիցն է: Այն հաւասար է 1-ի, եթէ գործադիրի ղեկավարը նշանակվի է, այսինքն՝ E=0.5-ի: Ինչպէս եւ խորհրդարանական ընտրությունների հաճախականութեան դէպքում այն փոփոխուած է կախուած ընտրությունների հաճախականութիւնից: Եթէ ընտրություններն իրականցվում են 2 տարին մեկ անգամ, ապա F=1, եթէ ընտրությունները տեղի են ունենում 3 տարին մեկ անգամ, ապա՝ F=0.9, 4 տարին մեկ տեղի ունենալու դէպքում F=0.8, 5 տարին մեկի դէպքում՝ F=0.7, եւ եթէ խորհրդարանը ընտրվում է 6 տարին մեկ, ապա F=0.6 □

J –դատական համակարգի գործակիցն է: Եթէ երկրորդ աստանի դատավորները նշանակվի են, ապա J=0.8, այն դէպքում, երբ ժողովրդի կողմից են ընտրվում կամ գործում է նաեւ երդուալ ատենակալների համակարգը, ապա J=1:

L –տեղական ինքնակառավարման մարմինների գործակիցն է: L=1, եթէ համայնքային ընտրությունները տեղի են ունենում 2 տարին մեկ, 0.9՝ երբ 3 տարին մեկ, 0.8՝ երբ 4 տարին մեկ են տեղի ունենում ընտրություններ եւ 0.7 երբ դրանք տեղի են ունենում 5 տարին մեկ:

U –դաշնային կամ (թէ) միատար (ունիտար) պետության ցուցանիշն է: Եթէ բանաձեւը կիրառուած է ճշտելու միատարր պետութեան ժողովրդավարականութեան տոկոսը, ապա եւ U-ն, եւ F-ը հաւասար են 1 միաւորի: Եթէ ճշտուած է դաշնային պետութեան ժողովրդավարութեան մակարդակը, ապա կախուած այն բանից թէ ինչ սկզբունքով են դաշնային ներկայացուցչական մարմնում ընտրուած եւ քուեարկուած դաշնային ենթակայաներից ընտրուած պատգամաւորները U-ն կարող է տարբեր արժեք ունենալ: Այն հաւասար է 1-ի, երբ դաշնային ներկայացուցչական մարմնում պատգամավորները համամասնորեն են ներկայացնում իրենց դաշնային ենթակայի (նահանգի) տարածքի բնակչութեանը: Օրինակ, եթէ որպէս նահանգի ներկայացուցիչ

ընտրուած պատգամաւորը կամ պատգամաւորներին խումբը նահանգում հաւաքել է 40 % է, ապա այդ տոկոսով էլ մասնակցում է սենատում տեղի ունեցող քուէարկութիւններին: Ս-ն հաւասար է 0.7-

ի, երբ հավասարապէս են ներկայցվում դաշնային կառույցները, բայց այդ ներկայացման պայմաններում հաշվի չի առնվում տվյալ դաշնային միավորի դաշնութան ենթակա կառույցի ներսում ընտրութիւնների ընթացքում դրսևտրուած քաղաքացիների համամասնութիւնը:

Այս բանաձէւը պետութիւնների ժողովրդավարականութիւնը ներկայացնում է տոկոսային մատուցմամբ՝ տոկոսաչափերով: Դրա հետ է կապուած բանաձէւի վերջում 100 %-ի աւելացումը:

Ամփոփելով անցյալում կատարած իմ աշխատանքները և ընդգծելով, որ մասնավորապէս 2003 թվականին հրատարակած ուսմանստիւթիւն մեջ եւ գործակիցներին այլ միավորներ եմ հատկացրել, ուզում եմ նշել, որ բանաձէւը պարզեցնելու նպատակով հաճախականութիւնների հետ կապված գործակիցը եւ խորհրդարանական, եւ նախագահ-վարչապետական ընտրութիւններում դարձրել եմ նույնը, այսինքն՝ 2003 թվականից առ այսօր իմ հրատարակած հոդվածներում, էլոյթներում նշուած հաճախականութեան տարբեր գործակիցները նպատակահարմար եմ համարում նույնացնել:

Ժողովրդավարականութեան բանաձէւի վերաբերեալ կարելի է, թերեւս այլ՝ ոչ պակաս արդիւնաւէտ առաջարկներ ներկայացնել, բայց իմ կարծիքով ամենակարեւորն այն է, որ գոյութիւն ունենայ ժողովրդավարականութեան չափման ընդհանրական միավոր՝ միասնական չափորոշիչ: Այս բնոյթի չափորոշիչի օգնութեամբ ժողովրդավարութիւնը դադարում է լինել վերացական մի հասկացութիւն:

Այս բանաձէւը միջոց է չափելու հետաքրքրող պետութեան ժողովրդավարութեան մակարդակը եւ հստակեցնելու, պարզեցնելու, թէ հատկապէս ինչ թերութիւնների պատճառով է այդ պետութեան համակարգը պակաս ժողովրդավարական, քան կարող էր լինել: Դրանից յետոյ արդէն տուեալ պետութեան նախաստիւթեան կամ նկատառումների հարց կմնայ բացթողումները վերացնելով մերձեւա՞լ 100 տոկոսանոց ժողովրդավարութեանը, թէ գոհանալ եղածով:

Յուսով եմ, իմ հարգելի ընթերցողը հասկանում է, որ իմ խոսքը ոչ թէ ընդհանրապէս ժողովրդավարութեան, այլ ժողովրդավարական համակարգերի մասին է, ժողովրդավարութիւնը օրենքով ամրագրելու հնարավորութեան մասին:

Բանաձէւը կազմելիս եւ գնացել եմ մի ճանապարհով, որը հնարավորութիւն է տալիս բանաձէւի առանձին հատվածները կիրառել առանձին վերցրած իշխանութեան տարբեր ճիւղերի համակարգերի համար:

Ինչպէս երեւում է դատական իշխանութեան յատուածում հաճախականութեան գործակից չի նշվում: Դա արուած է դատավորների կախվածութիւնը նաեւ քաղաքացիներից նուազագոյնի հասցնելու նպատակով: Դատավորը՝ վճռորոշ ատենանի դատաւորը պէտք է ընտրուի քաղաքացիների կողմից, բայց եւ պէտք է անկախ լինի: Նա երբեք չպէտք է իրեն կախվածութեան մեջ զգայ անգամ իրեն նշանակողից, նույնիսկ եթէ այդ նշանակողը ժողովուրդն է:

ՈՐՊԷՍ ԵԶՐԱՓՈՒՄ

21-րդ դարի սկզբում ժողովրդավարութեան առջև ծառայած խնդիրներից եւ մարտահրավերներից են քաղաքացիների վստահութեան պակասը քաղաքական գործընթացների եւ իշխանութիւնների նկատմամբ, հետաքրքրութեան նուազումը ժողովրդավարութեան գործընթացների հանդէպ:

Վերելում շարադրուած մոտեցումների կիրառումը կաւելացնի քաղաքացիների դերակատարութիւնը եւ դրան գուզահետ՝ վստահութիւնը իրենց մասնակցութեան կարելորութեան նկատմամբ: Մանաւանդ խորհրդարանական համակարգերում քաղաքական գործիչները կրնկալուեն որպէս քաղաքացիների հերթական ներկայացուցիչները միայն: Պետութիւնն է ժողովուրդը հարաբերութիւններում գլխավոր դերակատարութիւնը կանցնիէ քաղաքացիներին:

Այդ ամենը տեղի է ունենալու նախ եւ առաջ

ա) ներկայացուցչական մարմիններում քաղաքացիների ներկայութիւնը առարկայական դարձնելու եւ

բ) քաղաքական գործընթացներին քաղաքացիների մասնակցելու հաճախականությունը աւելացնելու միջոցով